

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Հավելված**

**«Վանաձորի Հ.Թումանյանի անվան  
պետական համալսարան» հիմնադրամի  
ռեկտորի 28.10.2016 թ. թիվ 938 Լ/Կ հրամանի**

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ   8  

«27»   10   2016թ.

ՎԱՆԱԶՈՐ- 2016

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՎՊՀ միջազգայնացման ռազմավարությունը բխում է ՎՊՀ ռազմավարությունից այնքանով, որ բարձրագույն հաստատության միջազգայնացումը բուհի կարևոր գործոններից մեկն է համարվում:

ՎՊՀ միջազգայնացումը բխում է համալսարանի առաքելությունից և ներառում է հետևյալ առաջնահերթությունները.

- Ակտիվ մասնակցություն՝ համաեվրոպական ընդհանուր կրթական տարածք ներգրավվելու նպատակով,
- Տարածաշջանային և միջազգային համալսարանական ցանցի ստեղծման նպատակով ՎՊՀ միջազգային հարաբերությունների ընդլայնում և բազմազանեցում,
- Եվրոպական բուհերի և կրթության և գիտության բնագավառում այլ միջազգային հաստատությունների հետ համագործակցության խթանում,
- ՎՊՀ-ի միջազգային գործունեության տեղեկատվության տարածում,
- Գրանտային նախագծերի որոնում և մշակում, տեղեկատվության տրամադրման նպատակով խորհրդատվական ծառայությունների բարելավում,
- Միջառարկայական գիտությունների շրջանակում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերի, ինչպես նաև համատեղ/կրկնակի կրթական ծրագրերի մշակում և ներդրում,
- Հրավիրվող աշխատակազմի և ուսանողների կարճաժամկետ և երկարաժամկետ կացության նպատակով բարենպաստ պայմանների ստեղծում,
- Ուսումնամեթոդական բաժինների, ամբիոնների, ֆակուլտետների և անհատական փորձագետների ակտիվ ներգրավվածությունը գիտական և կրթական նախագծերին և դրամաշնորհներին (կրկնակի/ համատեղ դիպլոմ, աշխատակազմի և ուսանողների շարժունություն):

## ԽՆԴԻՐՆԵՐ

Բուհի միջազգային գործունեությունն ուղղված է 2017-20 թթ ընթացքում հետևյալ խնդիրների լուծմանը.

- Դասավանդող աշխատակազմի շարժունության զարգացման նպատակով մեխանիզմների մշակում ,
- Դասավանդող աշխատակազմի ներգրավում անհատական դրամաշնորհներին և նրանց ձեռք բերած փորձի տարածման համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծում,

- Դասավանդող աշխատակազմին և ուսանողներին գիտական նախագծերում ներգրավման նպատակով կանոնակարգերի մշակում,
- ՎՊՀ-ում օտար լեզուների ուսուցման որակի բարձրացման համար մեխանիզմների մշակում,
- Ամբիոնների աշխատանքային պլաններում միջազգայնացման գործընթացի ներառում:

#### ՆՊԱՏԱԿՆԵՐ

2017-2020թթ ընթացքում համալսարանը նպատակ ունի միջազգայնացման բնագավառում իրականացնելու հետևյալ խնդիրները.

- Ընդլայնել գործունեությունը Եվրոպական կրթական տարածքում ընդգրվելու նպատակով,
- Ակտիվացնել մասնակցությունը տարածաշրջանային և միջազգային համալսարանների ցանցերի ստեղծման համար,
- Խթանել միջազգային համագործակցությունը գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում,
- Ստեղծել համագործակցության նոր եզրեր Բոլոնյան գործընթացի հիմնական դրույթներին առնչվող ժամանակակից բնագավառներում,
- Ընդլայնել, խթանել և բազմակողմանի դարձնել ՎՊՀ-ի ներգրավվածությունը միջազգային նախագծերում և դրամաշնորհներում (ERASMUS+, HORIZON 2020, VISEGRAD, և այլն),

#### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՎՊՀ-ի միջազգայնացման գործունեության արդյունավետության բարձրացման համար հետևյալ քայլերը պետք է ձեռնակվեն.

- Առավել մեծ թվով աշխատակազմի անդամների ներգրավում միջազգային նախագծերում,
- Բյուջեի համալրման (fund-raising) արդյունավետ ուղիների որոնում,
- Բենչմարքինգի մեխանիզմների վարելավում և առաջատար համալսարանների դրական փորձի ներդրում,
- Ուսանողների Անհատական Զարգացման Պլանի (PDP) մշակում և ներդրում՝ ուսանողների և աշխատակազմի շարժունությունը խթանելու նպատակով,
- Ուսանողների և աշխատակազմի շարժունության կանոնակարգի հիման վրա հայեցակարգի մշակում,
- Օտար լեզվի խթանում ուսանողների և աշխատակազմի շարժունության արդյունավետության բարձրացման նպատակով: